

պետն Գարրիէլէ՛րնդ սուրբ կուսին Մա-
րիամու խօսեցաւ՝ և ետ աւետիս յըզա-
նալոյն զՔրիստոս : Եւ դարձեալ յաւուր
չորերչարաթի՛ր եղև խորհուրդ մատնու-
թեանն Քրիստոսի : Զի գնաց Յուդա
առ Հրէայան՝ և ասաց նոցա . թէ զինչ
կամիր տալ ինձ՝ և ես մատնեցից զՅի-
սուս ՚ի ձեռս ձեր . և նորա խոստացան
նմա տալ չարծաթ՝ առ ՚ի մատնել զնա
նոցա : Զի փրկութիւն մեր՝ կատարի
չնորհօք և ողորմութեամբն Աստուծոյ
մերոյ :

Կը Հարութեանի :

ԵՏՐՈՒՐԱԿԱՆ ԴԱՄՐԱՆՆԵՐ

Եթա՛ւանիկ գայցէ և ժամ՝ զի առ վայրօքն արդիւնագործ
Զերկին ՚ի կորափիտ առնելն արօր ակօսարեկ՝
Ուտնահայ տէգ և նիզակս՝ ի բիրտ խոփու գայցէ ժանգէն,
կամ թէ թափուր սաղաւարտս ընդ անարի բախեալ
արքմուխ
Պակնուցու շիրմացն ՚ի բիր ընդ ոսկրոտին սոսկալիթխար :

ՎԻՐԳԻԼԻՍ . Մշակ . Ա .

Վիրգիլիոսի այս ըսածն հիմա տեղա-
վը կը կատարուի, ուր որ ինքը կընչա-
նակէր ոսկերաց հետ մէկտեղ արօրը,
խոփը, բահը և բրիչը, երկրիս խորերէն
դուրս կը հանեն ետրուրական հին քա-
ղաքականութեան ձեռագործները . և կը
յայտնեն աշխարհի անհետացած ժողո-
վրդեան մը բնակարանքն և անոնց տը-
նական կենաց կահքն ու կարասին, որ
մեզմէ հազարաւոր տարիներ առաջ ա-
պրեր է . այնպիսի ժողովրդեան մը, որ
խտալիոյ մէջ Հռովմայեցւոցմէ շատ ա-
ռաջ անուանի եղեր է, որուն քաղա-
քականութեան թաղուած արձանքն
հիմա դուրս կ'ելլեն :

Զերվէգրի գիւղին մօտ, որ Հռոմէն
վեց փարսախ հեռու է, հին ժամանակ-
ները Զերէ կամ Ակիւլլա անունով ետ-
րուրական քաղաքը կար, ուր փորելով
շատ գերեզմաններ գտնուեցան . կ'երե-
ւայ թէ այն դաշար Զերէի գերեզմանա-
տեղին եղած ըլլայ :


Զերէ կամ Կերէ հին Ետրուրիոյ քա-

ղաքը այն տեղը կ'ընկնէր, ուր էր Ա-
կիւլլա պեղատեան ամենահին դաղ-
թականութիւնը : Մաքսենտիոսի թա-
գաւորութեան մայրաքաղաքն եղաւ և
ետրուրական ցեղապետութեան (Lu-
cumone) զլխաւոր տեղին էր . զանձ
մ՝ ունէր ՚ի Գելիիս Ակիլլեցւոց անուամբ :
Ալլիոյ յաղթուելէն ետքը, 390 տարի
առաջ քան զհասարակ թուականն,
Հռովմայեցիք այս տեղ փոխադրեցին
իրենց սրբազան սպասները, Գաղղիաց-
ւոց յափշտակութենէն ազատելու հա-
մար :

Հիմա այս տեղն է որ Զերվէգրի կը
կոչուի :

Ետրուրացւոց ծագումն ու պատմու-
թիւնը, որոնք Հռովմայեցւոց տիրապե-
տութենէն առաջ խտալիոյ զանազան
ժողովրդոց մէջ երևելիներէն մէկն ե-
ղած էր, մթութեան քօղին տակ ծած-
կուած էր . և հիմա փոխանակ դրեանց
իրենց դամբանները կը խօսին նոյն ժո-
ղովրդեան վրայ, և կը ցուցնեն որ քա-
ղաքակրթութեան մէջ ինչ աստիճան
առաջ զնացեր են : Յամին 1835 քանի
մը պեղմունք ՚ի լոյս հանեցին Ապսդո-
նէ ըսուած երկրին վրայ Ակիւլլայի գե-
րեզմանատեղին . և թուրքիա իշխանը,
որ նոյն երկրին տէրն էր, քանի չափ
անօթ դտաւ այն գերեզմանաց մէջ, և
մեծ բազմութիւն մը ականակուռ զար-
դերու, զորոնք Հռովմայ Գրիգորեան
ըսուած թանգարանին պարգեւեց : Նոյն
պէս յամին 1836 ընդարձակ գերեզման
մ՝ ալ գտնուեցաւ Քրիստոսէ եօթն կամ
ութ դար առաջ շինուած, և Զէնտ-Ա-
ւետայի՝ խորհրդական նշաններով
բարձրաբանդակ մեծ միտալ մը, Միհր
չաստուածոյն խորհրդական պատկեր-
ներով և զարդերով նկարուած շատ ա-
նօթներ և արուեստական ուրիշ առար-

1 Այսպէս կ'անուանեն Պարսից մողէրը իրենց
սրբազան գրքերէն մէկն՝ որուն գրութիւնը Զրա-
գաշաին իրենց մեծ օրինագրին կ'ընծայեն : Զէնտ
աւետ և Բաղէնա ըսուած կրօնական գրոց մեկ-
նութիւնն՝ կը կազմեն կաթողիկոսութեան բովանդակ
գրութիւնը :



կաներ, որոնք ստուգեցին հին Ետրու-
րիոյ ասիական քաղաքականութեան
հետ ունեցած վերաբերութիւնը:

Բայց աւելի հետաքրքրական են վեր-
ջի ժամանակներս Ռուսրուի իշխանին
ամարանոցն եղած պեղմանց առթիւ 'ի
լոյս ելած բաներն, որոնց մէջ ընտա-
նեաց գերեզման մըն ալ կայ, զոր և կը
ներկայացընէ առաջիկայ պատերա, որ
գրեթէ ութ մեղր լայն քառակուսի մի-
ջոց մը կը զրաւէ: Մուտքը չորս պատե-
րուն մէկուն վրայ է, և միւս երեք պա-
տերուն վրայ յարմարցուած են մըր-
ճով քարի վրայ բանած գերեզմաննե-
րը, որոնց մէջ կը հանգչին մեռեալք,
և այս գերեզմանաց ամեն մէկուն վրայ
կան կարմրագոյն և ոսկեգոյն քարերէ
բարձիկներ:

Գերեզմանէ գերեզման եղած միջո-
ցին մէջ շատ մը անպաճոյճ փոսեր կան,
ուր կ'երևայ թէ ստորնագոյն աստիճա-
նի անձինք կը թաղուէին:

Մուտքին անմիջապէս հանդիպակայ
պատը, որ մեր պատկերին ներկայա-
ցուցածն է, կը փակէ իր մէջ ընտա-
նեաց զլխաւորին կամ թէ նոյն տեղը
թաղելոց մէջ աւելի երևելի անձին գե-
րեզմանը:

Նոյն գերեզմանին ստորնագոյն կողմը
բարձրաբանդակ գեղեցկագործ երկու
պատկերներ կը տեսնուին, որոնք ըստ
մեծի մասին անարատ պահուած են:
Ասոնցմէ մէկը մարդու կերպարանք ու-
նի, և հաւանական է որ տեսակ մը աս-
տուածութիւն կը ներկայացընէ, օձաձև
ոլորեալ ոտքերով և երկայն մօրուքով.
մէկ ձեռքը օձ մ'ունի, և միւս ձեռքը տե-
սակ մը ճիւղ: Այսպիսի պատկերներ
գտնուեցան նաև ետրուրական ուրիշ
քաղաք մը որ Տարկուինիա կ'ըսուի: Միւս
պատկերն երեքզլխեան Կերբեր մ'է, և
պարանոցը օձերէ ձևացած անուր մ'ու-
նի: Կամարը վեր բռնող սեանց խարըս-
խացը վրայ կենդանեաց ուրիշ պատ-
կերներ ալ կը գտնուին. ինչպէս կա-
տու և սագ այլ և այլ դրից մէջ:

Բայց այս գերեզմանատան յարգն ա-
ւելցընող բաներն են սեանց և պատե-

րուն զարդուցը վրայ եղած քանի մը
քանդակներն, որոնք կը ներկայացընեն
վնասողական և պաշտպանողական զէն-
քեր. ամենօրեայ գործածութեան հա-
մար սպասներ, ձկնորսութեան և որսոր-
դութե գործիներ, և այլն, և կենդանա-
ղիւններ, որոնք շատ բնական գուներով
նկարուած են:

ՀԻՆԳ ՇԱՐԱԹ ՕԴԱՊԱՐԿԻ ՄԷՋ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ԵՐԻՑ ԱՆԳՂԻԱՅԻՈՑ

ՅԱՓՐԻԿԷ

(Տես երես 81:)

— Ըրէ ուղածդ, պատասխանեց տղը,
դորը ծիծաղելով. դու ալ մասնաւոր
կերպ մ'ունիս աշխարհագրութիւնը ըմ-
բռնելու, որ շատ արհամարհելու չէ:

Եւ այնպէս վիկտորիայիս այն գծին
անցքը բաժակով տօնեցին:

Վիկտորիան երազաբար կը քալէր:
Արևմտեան դին ցած և գրեթէ միա-
կերպ լճափը կը տեսնէին. իսկ ներսե-
րը՝ Ուկանտա և Ուղոկա լեռանց ամե-
նէն բարձր տափարակները: Հովուն ե-
րազութիւնը հետզհետէ կը սաստկա-
նար, անանկ որ գրեթէ առ ժամ երե-
սուն մղոն կը քալէին:

Նիւնդային ջրերը սաստկութեամբ
ալէկոծուելով, ծովու ալեաց նման կը
փրփրային: Ալեաց ճօճմունքէն տղը դ-
րը հասկըցաւ որ լիճը շատ խոր պիտոր
ըլլար. հազիւ թէ իրենց արագ անցքին
ժամանակը՝ մէկ քանի կոշտ մակոյկ-
ներ ջրին երեսը տեսնելու կարող եղան:

— Այդ լիճը, ըսաւ տղը դորը, ան-
շուշտ իր բարձր գրից պատճառաւ Ափ-
րիկէի արևելեան կողմի գետոց բնական
աւազանն է. երկինքն ինչ որ իրմէն ե-
լած գետերէն գոլորշիով կ'առնու՝ ան-
ձրևով նորէն իրեն կը դարձընէ: Ինձի
ասպահով կ'երևնայ որ Նեղոսը ասկէ
պէտք է բղխէ: